

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ

ԿՅԱՆՔԻ ԱՎԱՐՏԻ ՀԱՐՅԸ ՄԱՐԴՈՒ ՍՈՍԱՏԻԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Սույն գիտական հոդվածում, մարդու սոմատիկ իրավունքների լույսի ներքո, ուսումնասիրվել են մահվան իրավունքի հարցերը, մասնավորապես մահվան իրավունքի ձևերը՝ զոհաբերություն, ինքնասպանություն, էվթանազիա, կրիպտոնազիա: Քննարկվել է էվթանազիայի տարատեսակները, պետությունների վարքագիծը՝ էվթանազիան օրինականացնելու, մահվան իրավունքը պոզիտիվացնելու հարցերում:

Հեղինակի կողմից վերլուծության է ենթարկվել կյանքի իրավունքի և մահվան իրավունքի կապը, ապրելը՝ որպես իրավական պարտականություն դիտարկելու հարցը՝ շեշտադրելով մարդու հավերժ չլինելու, խաղաղ և արժանապատիվ մահանալու իրավունքի ամրագրման կարևորությունը:

Հիմնարարներ- մարդու սոմատիկ իրավունք, մահվան իրավունք, ինքնասպանություն, ինքնագոհաբերություն, էվթանազիա, պոզիտիվիստական մոտեցում:

Մինչ մահանալը՝ անհրաժեշտ է ապրել: Սա մի սկզբունք է, որ յուրաքանչյուր կենդանի էակ փորձում է իրականացնել: Սույն հարցը դիտարկելով կյանքի իրավունքի համատեքստում՝ կարող ենք փաստել, որ կյանքի, ապրելու իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, իրավունքի սուբյեկտին՝ ֆիզիկական անձին, ընձեռված հնարավորություն՝ ապրելու: Այն բարձրագույն արժեք է, որի վկայությունը վերջինիս գրեթե բոլոր միջազգային-իրավական ակտերում ամրագրված, ներպետական, ազգային մակարդակով պաշտպանված լինելն է, հետևաբար՝ ֆիզիկական անձը, իր սոմատիկ իրավունքների շրջանակում, իր հայեցողությամբ որոշում է կառավարել իր կյանքը, քանզի կյանքը և մարմինը տնօրինելը, վերահսկելը, մարդու իրավունքն է:

Կյանքի իրավունքի հիմքը սաղմի, էմբրիոնի¹ իրավական կարգավիճակի պաշտպանությունն է, իսկ ավարտը՝ մահվան իրավունքը: Չանդրադառնալով սաղմների պաշտպանության², կյանքի իրավունքի³ բովանդակության վերաբերյալ հակասական մոտեցումներին, նշենք, որ մարդկային կյանքը կոնկրետ ֆիզիկական անձի համար հավերժ չէ:

Եթե մարդը, իսկ որոշ դեպքերում, բեղմնավորված էակն ունի կյանքի իրավունք, այսինքն՝ դրան պետք է համապատասխանի բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ հարգելու այդ իրավունքը, իսկ պետության պարտականությունը դրա իրացման համար անհրաժեշտ կառուցակարգեր սահմանի, ապա որպես կյանքի ավարտ՝ (կոնկրետ մարդկային կյանքն ունի ժամանակային սահմանափակում) անհրաժեշտ է նախատեսել դրա տրամաբանական ավարտը՝ մահվան իրավունքը:

Խոսելով մահվան մասին՝ չպետք է անտեսենք

ֆիզիկական, բիոլոգիական, հոգեբանական, սոցիալական, իրավաբանական մահը:

Մահը ինչպես իրավաբանական փաստ-իրադարձություն է, այնպես էլ իրավաբանական փաստ-գործողություն է: Իրավաբանական գրականության մեջ երբեմն նշվում է, որ մահը մեկ գործողություն չէ, այսինքն՝ այն միանգամից տեղի չի ունենում, այլ երկարատև գործընթաց է, որն ունի իր առանձնահատկությունները՝

Գ. Իոնասը մահվան իրավունքի առումով նշում է, որ հիվանդ անձը պետք է ունենա մահվան իրավունք՝ որպես լրացուցիչ իրավունք, կյանքի իրավունքի շարունակություն՝

Կարծում ենք՝ հեղինակի մտորումը տեղին չէ այն առումով, որ մահվան իրավունքը վերապահվում է միայն հիվանդին, այսինքն՝ դա մի իրավունք է, որն առաջանում է հիվանդ լինելու հիմքով: Ստացվում է մի վիճակ, երբ անձը հիվանդ չէ, սակայն չի ցանկանում ապրել, ուրեմն այդ անձը չունի մահվան իրավունք: Նման պարագայում խտրական մոտեցում կցուցաբերվի, որը չի ունենա որևէ հիմնավոր, ողջամիտ չափանիշ տարբերակման համար:

Որոշ հեղինակներ (Մ. Ի. Կովալյև) ճանաչում են մարդու մահանալու իրավունքը, սակայն գտնում են, որ կարիք չկա այն գրավոր տեսքով (իրավական ակտի տեսքով) ամրագրված լինի՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մահը վաղ թե ուշ վրա է հասնելու, հետևաբար, կարիք չկա այն ամրագրելու:

Վերը նշված տեսակետին համամիտ չենք, քանզի ցանկացած հարաբերություն տևական է, ուստի, եթե դիտարկենք այն փաստը, որ վաղ թե ուշ այդ հարաբերությունն ավարտ է ունենալու, ապա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կատարվի, որ այն չպետք է կարգավորենք: Մինչդեռ մահվան իրավունքի գաղափարի հիմքում ընկած է այն մոտեցումը, որ, եթե անձը ցանկանում է իր նախընտարած տարբերակով և իրեն հասանելի եղանակով ընդհատել իր կյանքը (անկախ որևէ հիմնավորման), ապա վերջինիս պետք է տրվի նման հնարավորություն:

Այնուամենայնիվ, այսօր գերիշխում է մահվան հարցերի քննարկման ոչ պոզիտիվիստական մոտեցումը: Հավելենք, որ իրավաբանական գրականության մեջ պոզիտիվիստական իրավաբանական (իրավահասկացությանը) երբեմն անվանում են նաև լեգիստական, նորմատիվիստական կամ էթատիկ:

Պոզիտիվիստական մոտեցումը ենթադրում է պետության կողմից սահմանված և սանկցիավորված նորմերի համակարգ (իրավունք): Այստեղ էականը ոչ թե բնական, այլ դրական իրավունքն է: Այսինքն՝ իրավունք է այն, ինչը գրված է, որոշակի է, սահմանված է պետության կողմից՝ անկախ բովանդակությունից⁷, դրա չկատարման դեպքում նախատեսված են բացասական հետևանքներ, այդ թվում՝ հարկադրանքի միջոցներ:

Իրավահասկացության նորմատիվային-լեգիստական կամ որ նույնն է պոզիտիվային (դրական) տիպին բնութագրական է իրավունքի (որպես պաշտոնական իշխանության կամքից և կամայականությունից անկախ, որոշակի օբյեկտիվ էության) և օրենքի (որպես իշխանության հարկադիր, պարտադիր պատվիրանի) նույնացումը⁸:

Ընդհանուր առմամբ մահվան իրավունքի պոզիտիվացման հարցով միատեսակ մոտեցում չկա: Այսօր աշխարհի բազում պետություններ նախընտրում են այն չպոզիտիվացնել, քանզի պոզիտիվացնելու դեպքում պետք է ընդունեն էվթանազիայի կիրառումը, իսկ որոշ դեպքերում նաև մարդու՝ առանց բժշկական ցուցումների կյանքից հեռանալու իրավունքը: Կարծում ենք՝ մահվան իրավունքի պոզիտիվացումը էական է, քանզի դրա հիման վրա պետությունը պարտականություն կունենա այդ իրավունքի իրականացման համար պայմաններ ստեղծել:

Այսօր ընդհանուր մոտեցումն այն է, որ մարդն իրավունք ունի իրեն զրկելու կյանքից (քանի որ ապրելու իրավական պարտականություն չկա), սակայն պետությունը և հասարկությունը իրավունք չունեն մարդուն այդ հարցում օժանդակել (քանի որ մահանալու պոզիտիվ իրավունք չկա, սակայն կա ապրելու բնական և անօտարելի իրավունք): Այսինքն՝ պետությունները լուռ ընդունում են, որ մարդն ազատ է իր կյանքը դադարեցնել, սակայն

ոչ ոք, այդ թվում՝ վերջինիս մերձավորները, բարեկամները, հասարակությունը, առավել ևս՝ պետությունը, չպետք է անձին օժանդակեն այդ հարցում, այլապես հարցը հիմնականում կդիտարկվի քրեաիրավական հարաբերությունների համատեքստում:

Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով՝ ՄԻԵԴ-ը նշել է, որ երրորդ անձի ձեռքով կամ պետական մարմինների օգնությամբ մահանալու իրավունքը չի վերաբերում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածին՝ կյանքի իրավունքին:

ՀՀ-ում մարդու մահվան իրավունքը, այդ թվում՝ արժանապատվորեն մահանալու, օրենսդրական ամրագրում չունի:

Ուսումնասիրելով գիտակցաբար կյանքին վերջ տալու պատմությունը՝ կարող ենք փաստել, որ այն դրսևորվել է հետևյալ ձևերով՝

- սեփական կյանքը զոհաբերել հանուն Աստծո՝ գիտակցելով, որ երկրային կյանք կվայելի և կարժանանա Աստծո սիրուն. սա առավելապես բնութագրական է հեթանոսական ժամանակահատվածին,
- ինքնասպանություն գործել՝ ապրելու ցանկություն չունենալու կամ ինչ-որ համոզմունքներ դավանելու համատեքստում,
- խնդրել, որպեսզի իրեն օգնեն կյանքից հեռանալ. մի դեպքում՝ որպես հիվանդությունից չտառապելու համար, մյուս դեպքում՝ ապրելու ցանկության բացակայություն:
- Երբեմն տեսական գրականության մեջ կյանքի ընդհատումը դիտարկվում է հետևյալ ձևաչափով.
 - օժանդակող, երբ բժիշկն օգնում է հիվանդին հեռանալ կյանքից՝ հիվանդի խնդրանքով,
 - կարեկցող, երբ բժիշկն անգիտակից հիվանդին օգնում է հեռանալ կյանքից՝ այդ հիվանդի հարազատների խնդրանքով,
 - ինքնասպանություն, երբ անձն է կյանքից հեռանում իր գործողության կամ անգործության շնորհիվ:

Ինչ վերաբերում է ինքնագոհաբերության (սեփական կյանքը զոհելու) երևույթին, ապա ժամանակակից աշխարհում այն գրեթե չի հանդիպում, իսկ եթե որոշ ցեղախմբերի մոտ այն առկա է, ապա դա միայն պայմանավորված է վերջիններիս կրոնական պատկերացումներով և անհմաստ է իրավական գնահատման ենթարկել, քանզի սուբյեկտն ինքն է որոշում ընդհատել իր կյանքը՝ իր կամային ակտի արդյունքում՝ գիտակցված եղանակով:

Այսօր ինքնասպանությունը համարվում է կյանքից հեռանալու, կյանքի իրավունքի իրացու-

www.journal.lawinstitute.am

մից հրաժարվելու, այսինքն՝ սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու եղանակ, ուստի անկախ այն հանգամանքից, որ պետությունը չի պոզիտիվացնում մահվան իրավունքը, մարդն ազատ է որոշելու իր ճակատագիրը՝ ապրելու, արարելու, թե մահանալու:

Անկախ նրանից՝ անձը կյանքը գոհում է կրոնական, թե անձնական նկատառումներից ելնելով, կա մեկ ճշմարտություն, որ կյանքը տնօրինելու իրավագործություն է նաև այն, որ անձը կարող է իր կյանքը վտանգի ենթարկել և որոշել իր կյանքը դադարեցնելու հարցը¹⁰: Ավելին՝ կյանքի իրավունքը ներառում է ապրելու իրավունքը, կյանքը ռիսկի դիմելու իրավունքը և կյանքը դադարեցնելու իրավունքը (մահանալու իրավունքը)¹¹:

Մահվան նկատմամբ սոմատիկ իրավունքի գոյության ձևերից մեկը էֆթանազիան է՝ մեկ այլ անձի լավ, բարի նպատակով մահ պատճառել («Thanatos», - մահ, «Hey»- ճիշտ, լավ):

Առկա է էֆթանազիայի 2 ձև՝ պասիվ և ակտիվ: Ակտիվի դեպքում կոնկրետ գործողություններ են ձեռնարկվում մարդու մահը վրա հասնելու համար, օրինակ, ներարկման միջոցով, իսկ պասիվի դեպքում՝ ձեռնպահ են մնում որոշակի ակտիվ վարքագիծ դրսևորելուց, որի հետևանքով մահը վրա է հասնում:

Խոսելով ակտիվ և պասիվ էվթանազիայի մասին հոգեբան Կ. Նալչաջյանը նշում է¹², որ պասիվի դեպքում այն գործողությունների դադարեցում է, քանզի դրա շարունակությունը անօգուտ է և անիմաստ, իսկ ակտիվի դեպքում՝ գործողությունների ձեռնարկումը՝ արագացնում է և նպաստում առանց ցավերի կյանքից հեռանալուն:

Իրավագետ Կոնին էվթանազիայի կիրառումը թույլատրելի էր համարում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ հիվանդի գիտակցված կամք, հիվանդի վիճակի լավացման անհնարիություն, բժիշկների միաձայն որոշում, դատախազական թույլտվություն (որոշում):

Ընդհանուր առմամբ՝ էֆթանազիան բնութագրվում է որպես հատուկ բժշկական միջամտություն, որն ուղղված է չբուժվող հիվանդի, ծանր տառապող մարդու կյանքի դադարեցմանը՝ իր կյանքը դադարեցնելու ցանկությունն արտահայտած մարդու պահանջով, այսինքն՝ էֆթանազիան բժշկական միջամտություն է՝ դադարեցնելու մարդու կյանքը, այն ունի մեկ նպատակ՝ դադարեցնելու անհարկի տանջանքները:

Էվթանազիայի ընդդիմախոսները գտնում են, որ էվթանազիան բժիշկների հանձնվելն է, կապիտուլյացիան, որը հակաբարոյականացնում է հենց

ազդեցությունը (պրոցեսը) և բժշկական անձնակազմին¹³: Կարծում ենք՝ սույն միտքը տրամաբանական չէ, քանզի բժիշկը Աստված չէ: Բժիշկը պրոֆեսիոնալ է, մասնագետ, ով ի գործ է բուժել այն խնդիրները, որոնք տվյալ պահին լուծում ունեն: Միևնույն ժամանակ մարդկության պամտությունն էլ կարող է վկայել, որ ժամանակի ընթացքում մարդիկ մահացել են միայն այն պատճառով, որ կոնկրետ հիվանդությունը տվյալ ժամանակահատվածում հնարավոր չի եղել բուժել:

Էվթանազիա բառը գիտական շրջանառության մեջ է դրվել 17-րդ դարից՝ Բեկոնի կողմից: Առաջին պետությունը, որն օրինականացրել է էվթանազիան, Նիդեռլանդներն էր: Հայտնի է, որ էվթանազիան է մի շարք երկրներում թույլատրվում է, որոշ դեպքերում էֆթանազիա կատարող անձն ենթակա է քրեական պատասխանատվության: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում, երբեմն բժշկական սխալի պատճառով գտնում են, որ էվթանազիայի օրինականացումն անիմաստ է: Անկախ այն հանգամանքից, որ պետությունը չի օրինականացրել էվթանազիան, այնուամենայնիվ պետության վարքագիծը վկայում է այն մասին, որ թույլատրում է պասիվ էվթանազիան: Օրինակ՝ այնպիսի իրավիճակում, երբ ծանր հիվանդը չի կարողանում հոգալ իր բժշկական ծախսերը, հիվանդին դուրս են գրում հիվանդանոցից, դեղեր չեն տրամադրում, վիրահատություն չեն իրականացնում, ինչի արդյունքում բժշկի պասիվ վարքագծի արդյունքում հիվանդը մահանում է: Ընդ որում՝ երբ քննարկում ենք օգնություն չտրամադրելու հարցը, խոսքը չի վերաբերում առաջին բժշկական օգնությանը, այլ դրանից հետո բխող մի շարք բժշկական միջոցառումների իրականացմանը:

Էվթանազիայի տարատեսակ է կրիպտոնազիան (առաջացել է հունարեն kryptos-թաքուն, գաղտնի, tantos-մահ բառերից), որի ժամանակ հիվանդի կյանքի ավարտի պահը որոշվում է ոչ թե հենց հիվանդի կողմից, այլ հենց բժիշկն է որոշում կա՛մ հիվանդի ընտանիքի անդամները, կա՛մ օրինական ներկայացուցիչներն են նախաձեռնում, իսկ բժիշկը՝ կիրառում:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ կյանքը և մարմինը տնօրինելը մարդու իրավունքն է, և մարդն ազատ է սեփական հայեցողությանը, սոմատիկ իրավունքների համատեքստում, տնօրինել իր կյանքը և մարմինը: Մարդու ազատությունը բացարձակ չէ, քանզի այն ենթակա է սահմանափակման այն պահին, երբ առաջանում է այլոց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի խախտման, ոտնահարման իրական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վտանգ: Կյանքի իրավունքը՝ որպես բնական, անօտարելի իրավունք, տրվում է մարդուն ի ծնե (ծնվելու պահից), որոշ դեպքերում՝ բեղմնավորման պահից, սակայն մինևույն ժամանակ գիտակցում ենք, որ կոնկրետ մարդկային կյանքը հավերժ չէ:

Այսօր իրավական հարթությունում դիտարկում ենք միայն կյանքի իրավունքի հարցերը՝ անտեսելով մահանալու իրավունքը, խաղաղ և արժանապատիվ մահանալու իրավունքը, որը կրկին մարդկային կյանքի տրամաբանական ավարտն է: Խուսափելով մահվան իրավունքի պոզիտիվացումից, օրենսդրորեն ամրագրումից, այսինքն՝ մարդու մահանալու իրավունքի իրավական ժխտումից՝ մարդու ապրելը դարձնում ենք պարտականություն, լավագույն դեպքում՝ խոստովում հարցի իրավական

կարգավորումից:

Վերոնշյալի լույսի ներքո կարծում ենք՝ մարդն ունի ինչպես բարեկեցիկ կյանքով ապրելու, այնպես էլ բարեկեցիկ մահանալու իրավունք, քանզի սեփական կյանքը տնօրինելը մարդու ստնատիկ իրավունք է՝ իր հայեցողությամբ կառավարել իր մարմինը և կյանքը, հետևաբար կյանքը բնդիատելը մարդու իրավունքն է, որը ներառում է ինչպես ինքնասպանությունը, այնպեւ էլ էվթանազիան: Ավելին՝ մահանալու իրավունքը մարդուն ընձեռված հնարավորություն է, որի իրականացումը պետք է լինի գիտակցաբար և կամովին, իր համար ցանկալի պահի և հասանելի եղանակով հեռանալ կյանքից:

¹ «Էմբրիոն» և «սաղմ» բառերը հոմանիշներ են: Էմբրիոն կամ սաղմ անվանում ենք բեղմնավորման պահից մինչև հղիության 8-րդ կամ 12-րդ շաբաթ ընկած ժամանակահատվածում ձևավորման փուլում գտնվող սուբյեկտին, հետևաբար 8-րդ կամ 12-րդ շաբաթից սկսած մինչ ծնվելը՝ պտուղ, իսկ ծնվելու պահից՝ նորածին, երեխա:

² Ընդհանուր առմամբ մարդկային սաղմի վերաբերյալ առկա է երկու մոտեցում: Մի դեպքում այն դիտարկվում է իզական սեռի ներկայացուցչի՝ մոր մարմնի մի մասը, մյուս դեպքում՝ ինքուրույն կարգավիճակ ունեցող երևույթ: Այսինքն՝ կարող ենք փաստել, որ այսօր միասնական մոտեցում չկա սաղմի, պտղի ինքուրույն իրավական կարգավիճակի, իրավական պաշտպանության մակարդակի մասին:

³ Կյանքի իրավունքի համատեքստում երբեմն նշվում է կյանքի անձեռնմխելիության իրավունքը, կյանքը տնօրինելու իրավունքը, այդ թվում՝ սեփական հայեցողությամբ ռիսկի դիմելու, մարմինը տնօրինելու, արժանապատիվ ապրելու իրավունքը:

⁴ Տե՛ս, Сабиров В.Ш. О мировоззренческих основах современной западной танатологии //Человек. 2002. N5. С. 100.

⁵ Տե՛ս, Szawarski Z. Samobojstwo: Wposzukiwaniu defmici // Etyka. W-vta; Poznan, 1988. N 23, էջեր 27-62.

⁶ Տե՛ս, Գամբարյան Ա., Մուրադյան Գ. Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, 2016, էջ 202:

⁷ Տե՛ս, Четвернин В. А. Понятия права и государства. Введение в курс общей теории права и государства. М., 1997, С. 37.

⁸ Տե՛ս, Վաղարշյան Ա. Գ., Պետության և իրավունքի տեսություն-2, դասախոսություններ, Եր?, 2011, էջ 33:

⁹ Տե՛ս, Pretty v. the United Kingdom, 29.04. 2002, application 2346/02:

¹⁰ Տե՛ս, Малейна М.Н. Человек и медицина в современном праве. М. 1995, С.37-75.

¹¹ Տե՛ս, Танаев В.М. Право на смерть // вестник государственного университета// Сэр.право Екатеринбург, 1999, Ном. 1, С. 39.

¹² Տե՛ս, Նալչաջյան Ա. Մահվան հոգեբանություն, Երևան, 1992, էջ 24:

¹³ Տե՛ս, Иванюшкин А. Я.Профессиональная этика в медицине (философские очерки), С. 154-155.

Արտակ Գեվորյան

Соискатель кафедры теории и истории государства и права института права и политики Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Вопрос о конце жизни в рамках соматических прав человека

В данной научной статье, в свете соматических прав человека, были изучены вопросы о конце жизни, частности формы о конце жизни: самоубийство, самопожертвование, эвтаназия, криптоназия.

А так же в данной научной статье были обсуждены вопросы о формах эвтаназии, поведение государств для легализации эвтаназии, о позитивистском подходе по вопросам конца жизни. Автор работы анализировал связь между право на жизнь и право на смерть. Право на жизнь как юридическая обязанность, подчеркивая тот факт, что человек не бессмертный, и что надо зафиксировать, что каждый человек имеет право на мирное и достойное умирание.

Ключевые слова: соматические права человека, право на смерть, самоубийство, самопожертвование, эвтаназия, позитивистский подход.

Artak Gevorgyan

Post-graduate Researcher Chair of Theory and History of State and Law Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

The issue of end of life in the scope of somatic rights of person

The given research paper, under somatic rights of a person, the issues of right to die, especially, types of right to die: suicide, self-sacrificing, euthanasia, kryptonasia have been studied.

In the research paper, the types of euthanasia, the approach of states to legalize euthanasia, to enshrine in legal acts (legal positivism) the right to die have been discussed. The author has discussed the tie between right to life (live) and right to die, the issues of living of person as legal obligation, emphasizing the fact that the person is not immortal, the importance that everyone has right to peaceful and dignified end of life.

Keywords: somatic right of a person, right to die, suicide, self-sacrificing, euthanasia, legal positivism approach.